## Տ. ՀՈՒՍԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՂԴԱՍՅԱՆ

Ծնվել է 1934 թ. մայիսի 31-ին ԱՄՆ-ի Ռոտ Այլն նահանգի Փրովիդենս քաղաքում: Նախնական և բարձրագույն ուսումն ստացել է ծննդավայրում: Երկար տարիներ դպրության աստիճանով ծառայել է տեղի Ս. Սահակ և Մեսրոպ եկեղեցում:

1955 թ. ընդունվել է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց ժառանգավորացի ընծայարանի բաժինը:

1959 թ. նոյեմբերին ավարտելով հոգևոր դասընթացը, Ս. Հրեշտակապետաց վանքում, ձեռամբ գերշ. Տ. Սուրեն արքեպս. Քեմհաճյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: Սրբազան հայրը Սրբոց Հակոբյանց վանքում վարել է զանազան պաշտոններ՝ ավագ թարգմանիչ, կալվածոց պատասխանատու, տեսուչ Ս. Աստվածածին վանքի:

1960 թ. Իսրայելի պետության մոտ նշանակվել է պատրիարքական ներկայացուցիչ և վանքապատկան կալվածոց պատասխանատու: Մի քանի տարի անց Ամենապատիվ Տ. Եղիշե Պատրիարքի ձեռամբ ստացել է ծայրագույն վարդապետության տասը աստիճաններ:

1971 թ. ընդունվել է ԱՄՆ-ի «Սետն հեյլ» համալսարան և նույն տարին նշանակվել Լևինգթոնի Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ:

1976 թ. նշանակվել է Ամերիկայի հայոց Արևելյան թեմի փոխառաջնորդ:

1991 թ. ընտրվել է Երուսաղեմի Ս. Աթոռի տնօրեն ժողովի անդամ:

1992 թ. նշանակվել է Վանքապատկան կալվածոց տեսուչ:

1992 թ. սեպտեմբերի 27-ին, ձեռամբ Ամենայն Հայոց Հայրապետի, ձեռնադրվել է եպիսկոպոս: